եւ աշխարհը մի նոր հայեացքով ներկայացնելու առաքելութիւնը: Այդ նոր աշխարհայեացքը տեսանելի էր դեռեւս 16-17 ամեայ Խաչատրեանի գծանկարներում ու դրանից եօթ-ութ տարի յետոյ ստեղծուած «Մայրութիւն» եւ «Երիտասարդութիւն» գեղանկարներում, որոնք էլ հենց 1965 թուին արժանացան արծաթէ մետալի եւ մինչեւ այսօր վերատպւում են միութեան եւ արտասահմանեան զանազան հանդէսների շապիկներին: Սակայն Խաչատրեանի գեղանկարչական գործերի յաջողութիւնը նրան չօտարացրին իր իսկական սիրուց՝ գծանկարից: Նաեւ շուտով հրաժարուեց գոյնից, հրաժարուեց լոյսը տարաբաժանելուց եւ աշխարհը լուսակներով՝ գոյներով վերըստեղծելուց: Խաչատրեանը ընտրեց առաւելագոյն դիմադրութեան ճանապարհը՝ աշխարհը վերստեղծեց միայն լոյսով եւ միագոյն գծով, ընդ որում գիծը դարձնելով լոյսին ձեւ տալու միջոց: Նա ջանաց միայն լոյսի եւ գծի միջոցով հասնել գեղանկարչական արտայայտչականութեան եւ, ինչպէս վկայում են վերջին վեց տարիներին ստեղծուած դիմանկարներն ու նաթիւրմորտները, այդ ջանքերն իզուր չանցան: Քիչ է ասել իզուր չանցան, մանաւանդ եթէ խօսքը վերաբերւում է փոքրաչափ մատիտանկարներին: Այս շարքի դիմանկարներում՝ ու նաթիւրմորտներում նկարիչը հասել է մի այնպիսի որակի, մտքի ու զգացմունքների այն աստիճան խտացման, որ ձեւերով իրապաշտ պատկերները դիտողի մէջ հարուցում են անըմբռնելի ու բառերով չձեւակերպուող զգացումներ: «Զորացած ծաղիկներով նաթիւրմորտ», «Կանացի դիմանկար», «Իմ կնոջ դիմանկարը», «Սալոմէ», «Ինքնանկար» եւ ուրիշ նման աշխատանքներ դիտողը համակում են գրեթէ նոյն զգացումներով, ինչ զգացումներով լցւում է առաջին անգամ սիրահարուած պատանին՝ իր սիրեցեալի հայեացքին հանդիպելիս: Այդպիսի պատկերներ կարող է ստեղծել միայն կեանքը, արարիչ բնութիւնը անսահմանօրէն սիրող մարդը, միայն նա, ով իր բոլոր բջիջներով զգում է յաւերիտենական գոյութեան հրաշքը, ով իրեն չի զատում բընութիւնից եւ ապրում է որպէս ամբողջականիկենդանի մի մասնիկը: Պատահական չէ, որ Ռուդոլֆ Խաչատրեանը նկարում է միայն բնորդից: Նա գեղեցիկը չի որոնում մտացածին պատկերներում: Նկարիչը գեղեցիկը տեսնում է իր մէջ եւ իր շրջապատում:



Photo ZAVEN (Erevan)

Երեւան՝ Ռ. Խաչատրեանի ցուցահանդէսի բացումը:

Photo ZAVEN (Erevan)

Ռ. Խաչատրեան կը մակագրէ:

տրեանը, որ ուժեղ եւ ինքնուրոյն խառնուածք ընտեղծագործող է, հետեւելով իր ներքին ձայնին, յամառօրէն եւ առանց զիջումների հաստատեց իր ճըշմարտութիւնը, որը, եթէ փորձենք բառերի վերածել, մօտաւորապէս կը հնչի այսպէս - «Ամէն ինչի չափանիշը արարիչ բնութիւնն է եւ բնութեան դէմ գնալը ինքնասպանութեան պէս մի բան է»:

Խաչատրեանի խորաթափանց հայեացքից թաքնուելու հնարաւորութիւն չկայ: Նա օժտուած է մարդուն անմիջապէս եւ խորութեամբ ճանաչելու թանկագին ձիրքով: Խաչատրեանը բնորդին պատկերում է ճշտութեամբ ու գրեթէ լուսանկարչական հաւաստիութեամբ, սակայն տեսանելի է դարձնում մարդու ամբողջ ներքինը, նրա ամբողջ հոգեկան հարստութիւնն ու ամենաբնութագրական յատկանիշները: Նա այն աստիճան է բացայայտում մարդուն, որ երբեմն բնորդն ինքը զարմացած ու անակնկալի եկած, Խաչատրեանի ստեղծած կերպարով սկսում է նորովի նայել իրեն, Ի՛նչ միայն իր ստեղծած պատկերների պարզութեամբ ու խորութեամբ, այլեւ իր աշխարհզգացողութեամբ ու խառնուածքով. Խաչատրեանը յիշեցնում է մեր միջնադարի եւ վերածնութեան վարպետներին: Նա ներքին հարազատութեամբ կապուած է Գեղարդ եւ Հռիփսիմէ ստեղծողներին, «Մոնա Լիզայի» անգերազանցելի հեղինակին, Ռուդոլֆ Խաչատրեանը իր փառաւոր նախնիների եւ հոգեւոր ուսուցիչների նման կատարելապէս տիրապետում է նկարելու արհեստին ու ձգտում է նրանց մերձենալ նաեւ արուեստով:



Ռ. Խաչատրեան.- Պատուհանին մօտ

(Gorky Galleries)



Ռուդոլֆ Խաչատրեան

Գրեց՝ Յովհաննէս Յարութիւնեան

Անցեալ տարի մի խումբ հայ կերպարուեստագէտներ արժանացան հանրապետութեան վաստակաւոր նկատչի կոչման: Վաստակաւորի պատուաւոր կոչումին արժանացածների թում էր նաեւ արդէն քառասունը բոլորած Ռուդոլֆ Խաչատրեանը, որը վաղուց ի վեր իր հաստատուն տեղն ունի ժամանակակից հայ կերպարուեստում:

Այդ տեղը նա նուաճելու էր - անկախ 1959 թուականին Վիեննայի համաշխարհային ցուցահանդէսում շահած պրոնզէ մետալից, 1965 թուականին հանրապետական երիտասարդական ցուցահանդէսում շահած արծաթէ մետալից, 1970 թուականին Կոմիտասի 100-ամեայ յոբելեանին նուիրուած ցուցահանդէսում շահած առաջին մրցանակից:

Ռուդոլֆ Խաչատրեանը շահէր թէ չշահէր յիշեալ մրցանակներն ու մրցանակը միեւնոյնն է նրան վիճակ-

Բնութիւնը ինքն արդէն գեղեցիկ է եւ ինքն է գեղեցկի արարիչը, իսկ Խաչատրեանին տրուած է ամէն ինչ գեղեցիկ տեսնելու եւ նոյնքան գեղեցկօրէն վերատեսնելու երջանկութիւնը:

Խաչատրեանին հիմնականում զբաղեցնում է դիմանկարի ժանրը, որտեղ եւ առաւել տեսանելի է նրա մասնագիտական անզուգական վարպետութիւնը եւ բնորդին բացայայտելու ու կերպաւորելու անսպառ կարողութիւն:

Իւրաքանչիւր անգամ Ռուդոլֆ Խաչատրեանի նոր աւարտուած գործը նայելիս թւում է, թէ արդէն անհնար է առաջ գնալը, թւում է նա այս անգամ արդէն սպառել է բոլոր հնարաւորութիւնները, թւում է նրա գիծը կատարելագործուելու տեղ չունի այլեւս, բայց յաջորդ աշխատանքով Ռ. Խաչատրեանը դարձեալ գերազանցում է իրեն եւ իր նախորդ գործը: Նկարիչն իր այդ զարմանալի ինքնագերազանցումներով անսահման հաւատ է ներշնչում մարդու ներքին հնարաւորութիւնների հանդէպ: Նա անընդհատ ապացուցում է, որ այդ հնարաւորութիւններն անսպառ են, եթէ սիրում ու հաւատում ես: Միայն սիրով ու հաւատով կարելի է իր մէջ վերագտնել բնութեան ու ներդաշնակուել նրա գեղեցկութեանը:

Գրքային տեսութիւնների սիրահարները, ինչ-որ կանոններ սերտած եսազուրկ մոտայամոլները երկար ժամանակ չէին կարողանում ըմբռնել Խաչատրեանի վերադարձը իրապաշտութեան: Նրանց համար առաւել ընդունելի ու գնահատելի էին նկարչի երիտասարդ տարիների փորձարարական գործերը, թէեւ, ամենայն հաւանականութեամբ, այդ գործերից նոյնպէս գլուխ չէին հանում: Նրանք պարզապէս ձեւացնում են, թէ իրենք ժամանակակից մտածողութիւն ունեն եւ պարզամտօրէն ժամանակակից են համարում ամէն տարօրինակ ու արտառոց յօրինուածք: Իսկ Խաչա-



Նատիայի դիմանկարը:

Ինչ էլ նկատում է Խաչատրեանը՝ մարդ, ծաղիկներ, ձուկ, սխտոր-թէ կարտուֆիկ - միեւնոյնն է - նա ձգտում է բացայայտել ու բոլորին տեսանելի դարձնել բնոյթի գեղեցկութիւնը: Իսկ դա միշտ յաջողւում է նրան, որովհետեւ արուեստագէտը ամէն ինչին վերաբերւում է նոյն սիրտով:

Երբեմն դիտողին կարող է թուալ, որ նա իտէալակացնում է մարդուն կամ որպէս բնոյդ ընտրուած ծաղիկն ու ձուկը: Բայց դա կարող է թուալ միայն նրանց, ովքեր չեն սիրում Խաչատրեանի սիրով, ովքեր, առհասարակ, մարդուն եւ իրերին չեն նայում սիրով ու հաւատով:

Անվերապահ սիրոյ արգասիք են Ռուդոլֆ Խաչատրեանի գրեթէ բոլոր աշխատանքները, յատկապէս մատիտով եւ սեպիայով արուած դիմանկարները, որոնցից մի քանիսը պատմական կամ առասպելական անձ են կերպաւորում: Նման դէպքերում նոյնպէս նրկարիչը օգտուել է բնոյդից, այս կերպ աւելի ընդ-